ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2017 թվականի N65 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի «2017 թվականի ամառային զորակոչը կազմակերպելու մասին» N669-Ն որոշման 7-րդ կետի և հիմք ընդունելով մարզի զինվորական կոմիսարների կողմից ներկայացված զորակոչային հանձնաժողովների նախնական կազմերի վերաբերյալ առաջարկությունները՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջանների տեղական (ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների) զորակոչային հանձնաժողովների կազմերը՝ համաձայն N1, N2, N3 և N4 հավելվածների:
2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի համայնքների ղեկավարներին՝ համապատասխան զինվորական կոմիսարիատներին ապահովել 2017 թվականի ամառային զորակոչի անցկացման համար անհրաժեշտ զորակոչային տեղամասերով, սպասարկող անձնակազմերով, ինչպես նաև նյութական և ավտոտրանսպորտային միջոցներով:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին՝ իրենց իրավասության սահմաններում ապահովել համակարգում աշխատող զորակոչային տարիքի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ներկայանալը զինվորական կոմիսարիատներ:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչությանը՝ ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասերում և

զորակոչիկների անվտանգ փոխադրումը, ինչպես նաև զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումը և ներկայացնելը զորակոչային տեղամասեր:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ ապահովել տեղական զորակոչային հանձնաժողովներում բժշկական սպասարկման պատշաճ մակարդակը, հանձնաժողովների անդամ հանդիսացող բժիշկ-մասնագետների ներկայությունը, համալրումը, ինչպես նաև զորակոչիկներին տարբեր տիպի պատվաստումներ կատարելու նպատակով անհրաժեշտ քանակի դեղորայքի, պատվաստանյութերի, ֆլյուրո (ռենտգեն) ժապավենների և երևակման նյութերի հատկացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2017թ. հունիսի 23
ք. Կապան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ.հունիսի23 - ի
N65- Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Լ. Գրիգորյան	Կապանի տարածքային զինվորական կոմիսար (հանձնաժողովի նախագահ)
Ա.Համբարձումյան	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի քաղաքապետարանի աշխատակազմի ծրագրերիևարտաքինկապերիբաժնիպետ
Է. Մնացականյան	ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
Ն.Ալեքսանյան	Կապանի զինկոմիսարիատի աշխատակից (հանձնաժողովի քարտուղար)
Ա. Թևանյան	Թերապևտ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ (ավագ բժիշկ)
Մ. Պետրոսյան	Հոգեբույժ, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ
Ն.Հարությունյան	Վիրաբույժ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ա. Խաչատրյան	Նյարդաբան, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Լ. Ղազարյան	Քիթ-կոկորդ-ականջաբան, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Վ.Հովհաննիսյան	Մաշկավեներաբան, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ջ Համբարձումյան	Սրտաբան, «Նորաշենիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ
Ժ. Սարդարյան	Ակնաբույժ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հ. Մարգարյան	Բուժքույր, «Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար **Ռ. Սարգսյան**

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ.հունիսի23-ի
N65- Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Մ. Պողոսյան	Գորիսի տարածքային զինվորական կոմիսար (հանձնաժողովի նախագահ)
Գ. Բոյյան	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի քաղաքապետի տեղակալ
Ա. Բաղդագյուլյան	ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ
Լ. Սարգսյան	Գորիսի զինկոմիսարիատի աշխատակից (հանձնաժողովի քարտուղար)
Ն.Իվանյան	Հոգեբույժ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ /ավագ բժիշկ/
Գ. Հայրապետյան	Թերապևտ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ն. Թունյան	Վիրաբույժ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Շ. Թունյան	Սրտաբան, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ա. Յոլյան	Ակնաբույժ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ա. Սարգսյան	Քիթ-կոկորդ-ականջաբան, «Գորիսի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Մ. Ասատրյան	Նյարդաբան, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Լ.Հարությունյան	Մաշկավեներաբան, «Գորիսի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Ն.Խաչատրյան	Բուժքույր, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Ռ. Սարգսյան**

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ. հունիսի 23 -ի
N65 - Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածքային զորակոչային հանձնաժողովի

Մ. Մկրտչյան	Սիսիանի տարածքային զինվորական կոմիսար (հանձնաժողովի նախագահ)
Դ. Հովհաննիսյան	ՀՀ ոստիկանության Սիսիանի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ
Վ. Իվանյան	ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքային համայնքի ղեկավարի տեղակալ
Լ.Վարդանյան	Սիսիանի զինկոմիսարիատի աշխատակից (հանձնաժողովիքարտուղար)
Ա. Ներսիսյան	Հոգեբույժ, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ (ավագ բժիշկ)
Ս. Իսախանյան	Սրտաբան, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ս. Սիրականյան	Վիրաբույժ, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Լ. Թամրազովա	Նյարդաբան, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Վ. Գևորգյան	Ակնաբույժ, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Է. Գևորգյան	Քիթ-կոկորդ-ականջաբան, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ի. Զիլֆուղարյան	Թերապևտ, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Մ. Թամրազով	Մաշկավեներաբան, «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Գ. Աբրահամյան	Բուժքույր «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Ռ. Սարգսյան**

Հավելված N4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ.հունիսի23- ի
N65- Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի տարածքային զորակոչային հանձնաժողով

Դ. Անանյան	Մեղրիի տարածքային զինվորական կոմիսար (հանձնաժողովի նախագահ)
Վ. Սարգսյան	ՀՀՍյունիքիմարզիՄեղրիի համայնքապետարանիաշխատակազմիկազմակերպչականբաժնիպետ
Ա.Մուրադյան	ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ
Ս. Գևորգյան	Մեղրիի զինկոմիսարիատի աշխատակից (հանձնաժողովի քարտուղար)
Ն. Խաչատրյան	Թերապևտ, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ/ավագ բժիշկ/
Ա. Օհանջանյան	Վիրաբույժ,«Մեղրուտարածաշրջանային բժշկականկենտրոն» ՓԲԸ
Ս.Պողոսյան	Մաշկավեներաբան,«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ
Է. Մելքոնյան	Ակնաբույժ, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ս. Պապոյան	Քիթ-կոկորդ-ականջաբան, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ
Հ. Հովհաննիսյան	Նյարդաբան, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ա. Վարդանյան	Հոգեբույժ, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ
Ա. Մանուկյան	Սրտաբան, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ս. Ավետիսյան	Բուժքույր,«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Ռ. Սարգսյան**